

Լ. Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. Գրաբարի բառապաշարը (V դար), *Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2006, 310 էջ:*

Լ. Շ. Հովհաննիսյանը մերօրյա հայտնի լեզվաբաններից է, որն զբաղվում է հայոց լեզվի պատմության, հին հայերենի կառուցվածքի զանազան հարցերի ուսումնասիրությամբ. նա հանգամանորեն քննել է դասական գրաբարի բայական ժամանակների կիրառությունը, XVII դարի գրաբարի պատմությունը, հայերենի և պարսկերենի աղերսները, հայտնաբերել և քննել է հայկազյան բառարաններում չարձանագրված հարյուրավոր բառեր, կատարել բազմաթիվ բառերի ստուգաբանություններ: Եվ ահա ընթերցողի սեղանին է դրել «Գրաբարի բառապաշարը (V դար)» աշխատությունը, որում քննել է գրաբարի բառապաշարի տարբեր շերտերը՝ բնիկ հայկական, փոխառյալ, ժողովրդախոսակցական, բարբառային և այլ բառեր: Օգտվելով Էդ. Աղայանի դասակարգումից՝ հեղինակն իր ուսումնասիրության ժամանակաշրջանը բաժանել է երեք փուլի. Ա) V դարից մինչև համեմատական լեզվաբանության կազմավորումը, այն է՝ XIX դարի 30-ական թթ., Բ) 1830-ական թվականներից մինչև մեր օրերը: «Հիշյալ ժամանակաշրջանում,– գրում է մենագրության հեղինակը,– հայոց լեզվի պատմության, այդ թվում և բառապաշարի խոր ու կայուն ուսումնասիրությանը խթանեցին երեք հիմնական գործոններ. ա) համեմատական լեզվաբանության կազմավորումը, բ) ոսկեդարյան գրականության ու լեզվի տարբերակումը, գ) V դարի թարգմանական և ինքնուրույն բազմաթիվ գործերի հրատարակությունը» (էջ 11), Գ) Խորհրդային շրջան: Այդ շրջանում կատարվել են բազմաթիվ ստուգաբանություններ, վերհանվել են և ոչ հնդեվրոպական լեզուների որոշ աղերսներ, խորապես ուսումնասիրվել է փոխառյալ բառաշերտը, ինչպես նաև մատենագրության լեզուն և ոճը: Այնուհետև հեղինակը մանրամասնորեն անդրադարձել է

բոլոր այն հեղինակներին, ովքեր այս կամ այն չափով քննել են գրաբարի բառապաշարին վերաբերող հարցեր:

Հիմք ընդունելով Հ. Աճառյանի և Գ. Ջահուկյանի տեսակետները՝ Լ. Հովհաննիսյանը հանգամանորեն քննում է հնդեվրոպական կամ բնիկ հայերեն բառաշերտը: Ըստ Հ. Աճառյանի՝ հնդեվրոպական բառերի քանակը հայերենում 713 արմատ է և 196 տարբեր արմատների տարբերակային ձևեր: Հովհաննիսյանն ընդունում է Գ. Ջահուկյանի ճշգրտած բառացանկը՝ դրա վրա ավելացնելով իր իսկ հայտնաբերած մի քանի բառերը՝ ականջ, առատ, քունք, քրքանք, քրքիջ և հավանական համարելով նաև գաւտի բառը (էջ 42), իսկ Գ. Ջահուկյանի ընդունած բնիկ հայերեն երանիկ, կնճիթ, հաւատ, քարուակ («խաղը ու խայտառակ, ամոթայի») բառերը համարում է իրանական փոխառություն (էջ 42):

Լ. Հովհաննիսյանը նշում է, որ փոխառության վերաբերյալ հայագիտության մեջ կա երկու տեսակետ՝ փոխառության նեղ և լայն ըմբռնում: Առաջին տեսակետի կողմնակիցները փոխառություն են համարում օտար հնչյունակազմով, այսինքն՝ փոխառու լեզվի հնչյունական օրինաչափություններին չենթարկված բառերը: Փոխառությունների նեղ ըմբռնման մի արտահայտություն էլ այն է, որ փոխառություն են համարվում կայուն և հաճախական կիրառություն ունեցող բառերը: Ըստ փոխառությունների ըմբռնման լայն տեսակետի, փոխառություն են համարվում նաև օտար հիմքերից ու բառայիններից բաղադրված բառերն ու բառակապակցությունները (էջ 45–46): Ի դեպ, Հ. Աճառյանն իր աշխատություններում այդ երկու սկզբունքն էլ կիրառել է:

Այս հարցում Լ. Հովհաննիսյանը հանդես է բերում իր յուրահաստուկ մոտեցումը, ըստ որի փոխառյալ միավոր չի համարում.

ա) օտար ձևայթ+հայերեն ձևայթ կազմությունը, ինչպես՝ ան-ուծ, սորա-կալ,

բ) համանուն շարքի այն միավորները, որոնք ձևաբ. են բերել նոր իմաստ, որը չկա փոխառու լեզվում, օրինակ՝ բազուկ «ճակնդեղ» իմաստով բառը, որը ստեղծվել է բազուկ «դաստակ»-ի համաբանությամբ,

գ) օտար աղավաղված կամ բարբառային ձևերը, օրինակ՝ աֆոկ «հանցանք» իմաստով բառը, որն իրանական ծագում ունեցող ահոկ բառի տարբերակն է,

դ) այն միավորները, որոնք համատեքստում դիտվում են իբրև օտար բառ: Այսպես, օրինակ՝ Հ. Աճառյանի տվյալներով հայերենում հանդիպում են երբայերեն 138 օտար բառ (էջ 47):

Գարծում ենք՝ հեղինակի այս չորս հիմնավորումներն էլ ճիշտ են:

Հայագիտության մեջ տարակարծություններ կան նաև իրանական փոխառությունների քանակի վերաբերյալ. այսպես՝ Հ. Աճառյանը դրանց քանակը հասցնում է 1405-ի, իսկ Գ. Ջահուկյանը՝ 837-ի, որից իրանական արմատական փոխառությունները՝ 712-ի (էջ 48):

Հեղինակը հին իրանական փուլը ներկայացնում է երեք լեզուներով՝ մարերեն, հին պարսկերեն, ավեստերեն: Բայց հայերենի վրա մեծ է միջին իրանական լեզուների ազդեցությունը: Միջին իրանական լեզուները բաժանվում են երկու խմբի՝ հյուսիսարևմտյան և հարավարևմտյան: Առաջինի մեջ մտնում է պարթևերենը, իսկ երկրորդի մեջ՝ միջին պարսկերենը, որոնք էլ հայերենի իրանական փոխառությունների հիմնական սկզբնաղբյուրներն են: Հնչունական օրինաչափությունների հաշվառումով Հովհաննիսյանը պարթևական փոխառություններից առանձնացնում է 110, իսկ միջին պարսկերենից 85 բառ (էջ 55): Ըստ հեղինակի՝ V դարում կատարված իրանական փոխառությունների քանակը 836 բառ է (էջ 64):

Հ. Աճառյանը իրանական փոխառությունները բաժանում է 22, իսկ Գ. Ջահուկյանը՝ 23 իմաստային խմբերի: Լ. Հովհաննիսյանն իրանական փոխառությունները ըստ

կիրառության բաժանում է երկու տեսակի՝ նվազ հաճախական բառեր՝ ախտար, անգար, բագ «բաժին», դաշխուրան, զեան, ճեմիշ, օշնան, դենպետ, մովպետան մովպետ, անդերձապետ, փուշտիպան, և անկախաբար չկիրառվող բառեր, օրինակ՝ ասպ (ասպազեն, ասպաստան), ատր (ատրուշան, ատրճանակ), բար «դուռ» (բարապան), դուխտ (Որմզդդուխտ, Ջարմանդուխտ), սարդ «տարի» (նաւասարդ, երիտասարդ), անդարձ «կտակ» (անդարձական), արգ (անարգ), պաշտ (պաշտել, պաշտումն, աստուածապաշտ) և այլն (էջ 78–80):

Հեղինակը ցույց է տալիս, որ իրանական որոշ արմատներ հայերենում դրսևորվել են հնչյունային տարբերակներով, օրինակ՝ իրանական kār «գործ, անել» արմատից ունենք անկար, օգտակար և այլն, var «ծածկել» արմատից՝ վարագոյր, սաղավարտ, վարտիք, նան՝ վերմակ և այլ բառեր, որոնք ձայնավորային տարբերակներ են: Կան նաև բաղաձայնական տարբերակներ, օրինակ՝ մոյլ-մուճակ, ram «խումբ» – երամ, երամակ, pāx նպար, պարեն, նան՝ ամբար և այլն: Կան նաև բայահիմքային տարբերակներ, օրինակ՝ յազեմ բառում yaz-ը ներկայի հիմքն է, որի yašt անցյալի հիմքը առկայացել է յաշտ առնել «գոհել» կապակցության մեջ (էջ 84):

Լեզվաբանը մեկ առ մեկ քննում է Հ. Աճառյանի և Գ. Ջահուկյանի կազմած ասորական փոխառությունների ցանկերը և ներկայացնում իրենք: Նրա կարծիքով ասորական փոխառությունների քանակ 130 բառ է, որոնք հանդես են գալիս նաև քերականական ձևերով ու կառույցներով (էջ 91):

Հ. Աճառյանն իր «Հայոց լեզվի պատմություն» աշխատության 2-րդ մասի 5–54 էջերում քննել է հունական փոխառությունները հայերենում և նշել, որ դրանց քանակը 916 բառ է, իսկ ըստ Գ. Ջահուկյանի՝ մինչև V դարը հունարենից հայերենի կատարած փոխառությունների քանակը 107 բառ է: Այստեղ տարբերությունները այդքան մեծ են այն պատճառով, որ Հ. Աճառյանն իր ցանկում զետեղել է նաև միջինհայերենյան

¹ Տե՛ս նրա «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան», Երևան, 1987, էջ 617:

և աշխարհաբարյան նյութը: Լ. Հովհաննիսյանի հաշվումներով հունական փոխառությունների ցանկը ընդգրկում է 293 բառ, որոնք նա բաժանում է տարբեր իմաստային խմբերի (էջ 94–107):

Լատինաբան փոխառություններին անդրադառնալիս հեղինակը նշում է, որ ըստ հետազոտողների կարծիքի՝ դրանք հայերենին են անցել հունարենի միջոցով: Հ. Աճառյանի ցանկում լատիներենից հայերենին անցած բառերի քանակը 151 է, որից միայն տասը բառ է անմիջապես անցել լատիներենից հայերենին²: Այստեղ կարևոր ենք համարում Լ. Հովհաննիսյանի հետևյալ եզրակացությունը. «Լատինական փոխառությունները հիմնականում մատենագրական փոխառություններ են: Արդի հայերենում գործածական որոշ բառեր հետհինգերորդարյան վկայություններ են, որոնք ամրագրվել են եվրոպական նոր լեզուների ազդեցությամբ. դուքս, կարդինալ, տիտղոս, սենատոր: Լատինական ամսանունների համակարգային կիրառությունն էլ դարձյալ նոր ազդեցությամբ պետք է բացատրել» (էջ 116):

Աշխատության հաջորդ բաժնում հեղինակը քննում է V դարից ավանդված այն բառերը, որոնք արձանագրված չեն Նոր հայկազյան բառարանում, կամ էլ դրանք թեև արտացոլված են Առձեռն բառարանում, բայց վկայությունների բացակայության պատճառով անհայտ են մնացել դրանց հեղինակը և գործածության ժամանակը: Այդ հարցը ճշգրտելու նպատակով հեղինակը մեկ ամիս քննում է V դարի ինքնուրույն մատենագրության և թարգմանական (Աստվածաշնչի) լեզուն: Յուրաքանչյուր հեղինակից առանձնացնում է այն բառերը, որոնք չկան Նոր հայկազյան բառարանում, այսպես՝ Կորյունից հինգ բառ (աշխարհահալած, աշխարհահեծ, մատենանշան, պսակահաս, վարդապետաս էր – էջ 121), Եզնիկ Կողբացուց վեց բառ (ակնբաց, մարմնապիշ, մենակերպ, նուագածություն, ոգեղեն, չարաբարել – էջ 126–27), Փավստոս Բուզանդից քսան բառ (աշխարհաւանդ, արջն, բռնաբարություն, գետախառնունք, եկեղեցախորան, եղէգնաբերան, երամակա-

կայ, գնդկապետ, իրաքաջ ...– էջ 131–133), Ագաթանգեղոսից երեսուներկու բառ (ամանոր, անկարծակամ, անկու, անունջ, անսթափ, առաքելաբան, առաջագիր, արտօսրաբեր ...– էջ 137–139), Եղիշեից ութ բառ (աստուածագուակ, գետնաբեկ, գետնանկողին, խոնաստան, մայպետ, պատուավորք, փսիրայ, փսիաթ – էջ 142–143), Մովսես Խորենացուց տասներեք բառ (աջողաձեռնագոյն, արքայամանուկ, գահարար, գեղեցկադիմակ, դատարկակաց, երկնադեզ, զիգոստատ «զինվորների ռոճիկը կշռող պաշտոնյա», խորշակաբեր, կարմրիկ, հեղուսուած, մարսիկեան, միագլուխ, որձաքարեայ – էջ 153–155), Ղազար Փարպեցուց երեսունուրթ բառ (աղեղնաձայն, այրացի, անձնաքարշոյթին, աշխարհակորուստ ...– էջ 160–163), Հովհան Մանդակունուց վեց բառ (աղտեալ, եղանակամայր, երդմնակերություն, ըղձափափկություն, համարձակերես, վարավատնես), Աստվածաշնչից ութ բառ (բարձրանձն, մոխրահեղձոյց, շարաթակրօն, ուսրնդանութ, նստագոյն, սաղեմովթ, քոռին «թիկնապահների խումբ», անխում – էջ 177–178): Պարզ է, որ Նոր հայկազյան բառարանում չվկայված բառերը նրանք են, որոնք հայտնաբերվել են բառարանի հրատարակությունից հետո:

XIX դարի շատ ուսումնասիրողներ V դարի հայերենի բառապաշարի մի շերտն էլ անվանել են ռամկական բառեր³: Վ. Առաքելյանը «Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության» աշխատանքում (Երևան, 1981), դրանց տվել է հետևյալ անվանումները՝ բարբառային բառեր (էջ 80), գավառական բառեր (էջ 167), ժողովրդախոսակցական բառեր (էջ 167), գրաբարից շեղվող ձևեր (էջ 199), ժողովրդախոսակցական լեզվի տարրեր (էջ 204): Այս բոլոր անվանումների փոխարեն Լ. Հովհաննիսյանը կիրառում է գրական նորմային հարող բառապաշար (էջ 183) բառակապակցությունը, որը, մեր կարծիքով, ավելի ճիշտ անվանում է: Նման տարբերակման համար նա հաշվի է առնում հետևյալ չորս հանգամանքները՝ ա) բառային տարբերակների գոյությունը, բ)

² Նույն տեղում, էջ 40–48:

³ Տե՛ս Ա. Այ տ ը ն յ ա ն. Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866, էջ 62:

հոմանիշների առկայությունը, օրինակ՝ ամ-տարի, աղարի-երկան-մուլ, անդեայ-տուար, ասր (բուրդ) – գեղմն, զգաթ-կիզն, բիր-ջին-գաւագան-մահակ, գուր-ծակ-փապ, թագուհի-բամբիշն-դշխոյ, թակարդ-գառագիւղ-ծուղակ-հաղը-վարմ, մոխիր-ա-ճիւն-շլան, վիզ-պարանոց-ուլն և այլն (էջ 185–186): գ) Բառերի նվազ հաճախականությունը, օրինակ՝ նիհար, հերիք, տաք, կոճատ, սիրուն, թասուն, զագաշոտ (ցնդած, անպարկեշտ), քստտեմ (վեր ցատկել), ամանել (ամանի մեջ լցնել), մոմնել (մոմով պատել) և այլն: դ) բառի բառաձևի արդի որևէ բարբառում կամ բարբառների մի խմբում պահպանվելը, օրինակ՝ ականի, ամիկ, աչացու (կուր), արեւագալ, թանգուզեմ (ճողոպրել), ծմակ, կակագել, մարդածախ, վեզ (վեճ), տոռն (պարան), ցքի (օղի), փղապան (հնդիկ), փուխր և այլն (էջ 203): Աստվածաշնչից Վ. Առաքելյանն առանձնացնում է 163 բարբառային բառ⁴:

Լ. Հովհաննիսյանն ավելի մեծ տեղ է հատկացնում բառային տարբերակների քննությանը՝ դրանք ներկայացնելով տարբեր կառույցի զուգաձևերով, այսպես՝ ձայնավորային փոփոխություններով տարբերակներ՝ խոհարար-խահարար, խոհակեր-խահակեր, բովանդակ-բավանդակ, երախայ-երեխայ, իջաւան-իջեւան, վսեմ-վսամ, շեղ-շիղ, լողակ-լողակ, բաբելացի-բաբիլացի, կաթողիկոս-կաթուղիկոս և այլն (էջ 211–214), ձայնավոր-երկբարբառային տարբերակներ՝ ախոյեան-ախոյան, աղօթկեր-աղօթկեար, դիցապաշտ-դիցապաշտ, երկոքին-երկոքեան և այլն, երկբարբառային տարբերակներ՝ աղբեր-աղբիր, գելո-գիւղ, խլություն-ձայնեղություն ներկայացնող տարբերակներ՝ ընկեր-ընգեր, ցանկ-ցանգ, բանտ-բանդ, ընտանի-ընդանի, բաղաձայնների անկման կամ հավելման տարբերակներ՝ արդ-զարդ, ընկենուլ-զընկենուլ, անկարծ-յանկարծ, երկար-յերկար, Բաբելոն-Բաբելովն, բառակազմական տարբերակներ՝ համանուն-հոմանուն, ենթադրեմ-ընթադրեմ, ամամ-ամանամ, օծեմ-օծանեմ, դպրոց-դպրանոց, հիմքակազմա-

կան տարբերակներ՝ անյիշութին-անյիշողութին, լսելութին-լսողութին, շարունական-շարունակական, այրաբար-առնաբար, ազդական-ազդեցական, աճուն-աճեցուն, յագութին-յագեցութին և այլն:

Ավելի մեծ հետաքրքրություն է ներկայացնում աշխատության վերջին՝ 5-րդ գլուխը, որտեղ հեղինակը քննել է գրաբարի բառարաններում չարձանագրված կամ նորահայտ բառերը: Հայկազյան բառարանների հրատարակությունից հետո հայտնաբերված նոր ձեռագրերի ու պատասխանների, հրատարակված քննական բնագրերի հիման վրա Ն. Բյուզանդացու, Ն. Ակիկյանի, Ա. Վարդանյանի, Հ. Աճառյանի կողմից հայտնաբերվել են վերոհիշյալ բառարաններում չարձանագրված բազմաթիվ բառեր, որոնց շարքը համալրում է գրախոսվող գրքի հեղինակը: Նա հայտնաբերել է 162 բառ, որոնք այբբենական կարգով և բնագրային վկայություններով ներկայացրել է սույն գրքի 265–295 էջերում: Նա առանձնացրել է նաև բառերի երկու այլ խումբ ևս, որոնցից առաջինում զետեղել է այն 22 բառերը, որոնք արտացոլված են գրաբարի որևէ մեկ բառարանում, բայց ՆՃԲ-ում կամ չկան, կամ էլ կան, բայց վկայությունները ուշ շրջանից են: Երկրորդ խմբում տեղ գտած յոթ բառերի գրչագրական աղավաղումների կամ վրիպակների փոխարեն հեղինակն առաջարկում է դրանց ճիշտ ձևերը, այսպես՝ ժամասակետո, փոխանակ՝ ժամանակետո, խստաբեր, փոխանակ՝ խստամբեր (Փարպեցի), կողէք, փոխանակ՝ կողէք, մարդալոյզ, փոխանակ՝ մարդելոյզ (մարդագող, շողոքորթ, խաբեբա), մենթենթան, փոխանակ՝ մենթան (զգեստ, հագուստ), յառթութին, փոխանակ՝ յուռթութին, պաճաւանդ, փոխանակ՝ պախճաւանդ (գոտի, կանացի զարդ – էջ 293–295):

Այսպիսով, գրախոսվող աշխատանքում հեղինակը մանրամասնորեն քննել է V դարի գրաբարի բառապաշարի տարբեր բառաշերտերը՝ բնիկ, փոխառյալ, ժողովրդախոսակցական, բարբառային և այլն, ինչպես նաև հայտնաբերել և բնագրային օրինակներով ներկայացրել է շուրջ երկու հարյուր բառ:

⁴ Վ. Առաքելյան. Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Երևան, 1984, էջ 75:

Աշխատության վերաբերյալ ունենք հետևյալ դիտողությունները. ա) Ն. Բյուզանդացին «Նոր բառգիրք հայկազեան լեզուի սրբագրուած եւ ճոխացուցած Ն. Բիւզանդացու ձեռքով» (Ժնն, 1990) աշխատանքում մեր հաշվումներով ավելացրել է ավելի քան վեց հազար գլխաբառ, հետևաբար, ճիշտ կլինեն, եթե Հովհաննիսյանն իր հավելումները համեմատեր դրանց հետ, բ) աշխատության հարցի պատմության մեջ չեն արտացոլվել 1989 թվականից հետո հրատարակված լեզվաբանական աշխատանքները: Թեև հեղինակը ծանոթագրում է՝ «Մեր գրքի հրատարակությունը ձգձգվել է շուրջ մեկուկես տասնամյակ, այդ պատճառով հարցի պատմության մեջ մի շարք նոր աշխատանքներ արտացոլված չեն» (էջ 39), բայց նայնպես, կարծում ենք, որ աշխատությունը կշահեր, եթե հեղինակն անդրա-

դառնար այդ աշխատանքներին, գ) հայտնի փաստ է, որ բառագործածությունների վիճակագրական քննությունն առանց համաբարբառների հնարավոր չէ ճշգրտորեն կատարել: Այս աշխատանքում հեղինակը լայնորեն օգտվել է Թ. Աստվածատրյանի Աստվածաշնչի և ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմած համաբարբառներից, բայց համաբարբառները կազմողների մասին ոչ մի հիշատակություն չի արել, որը ճիշտ մոտեցում չէ:

Այսուհանդերձ, Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառապաշարը (V դար)» աշխատության այս համառոտ վերլուծությունից իսկ պարզ դարձավ, որ այն արժեքավոր հետազոտություն է և լուրջ ներդրում գրաբարի բառապաշարի ուսումնասիրության բնագավառում:

ԳԵՎՈՐԳ ԹՈՍՈՒՆՅԱՆ